# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

## ՇՀ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ԿՆՔՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Պատվիրատուն՝ <<Գյումրու բժշկական կենտրոն>>ՓԲԸ-ն, որը գտնվում է ք. Գյումրի Գ. Նժդեհի 3/3 հասցեում, ստորև ներկայացնում է <<ԳԲԿ14-ՇՀԱՊՁԲ-11/12>>ծածկագրով հայտարարված շրջանակային համաձայնագրերով ընթացակարգի արդյունքում 2014թ-ի ապրիլի 14-ին կնքված N ԳԲԿ-ՇՀԱՊՁԲ-11/12-328 ծածկագրով պայմանագրում (այսուհետև՝ Պայմանագիր) 2014թ-ի հուլիսի 07-ին կատարված փոփոխության (այսուհետև՝ Փոփոխություն) վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը:

*Փոփոխության պատճառ:* Պայամանգրի կողմերը փոխադարձ համաձայնությամբ որոշել են պայմանագրի 9-րդ կետի 9.3 ենթակետը շարադրել նոր խմբագրությամբ:

***Փոփոխության նկարագրություն:*** 9.3 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր պայմանագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:
Պայմանագրի կատարման ընթացքում գործակալի փոփոխությունն իրականացվում է գնորդի համաձայնությամբ:
Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ.

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի.
2) Սույն պայմանագրով նախատեսված ապրանքի շուկայական գների ավելի քան քսան տոկոսով փոփոխման դեպքերի:

Արգելվում է սույն պայմանագրում կատարել այնպիսի փոփխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի քանակի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:
Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը.

*Փոփոխության հիմնավորում:* Սույն փոփոխություն իրականացվում է ՀՀ կառավարության 10.02.2011թ. № 168-Ն որոշմամբ հաստատված << Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 67-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված պահանջների կատարման նպատակով:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ Աննա Սիմոնյանին:


Հեռախոս՝ **<u>094-821-444:</u>**

**Էլ. փոստ՝ ann-simonyan@mail.am:**

Պատվիրատու՝ << Գյումրու բժշկական կենտրոն>> ՓԲԸ